

ԳՅՈՒԹԵՒ ԿԵՐՊԱՐԸ ԹՈՄԱՍ ՄԱՆԻ «ԼՈՏՏԱՆ ՎԱՅՍԱՐՈՒՄ» ՎԵՊՈՒՄ*

Սիրվարդ Ստեփանյան

Բանալի բառեր՝ թոմաս Ման, վեպ, Լոտտա, գերմանական, Գյորե, սեր, արվեստ, գրականություն, մարդկային, բնավորություն:

Գերմանական գրականության ականավոր ներկայացուցիչ՝ թոմաս Մանի «Լոտտան Վայմարում» վեպի ստեղծման շարժարիթներն ունեն ավելի շատ քաղաքական-փիլիսոփայական, հոգեբանական, քան գրական բնույթ: Այս առումով խնդիրը պետք է դիտարկել Գյորե-Ման կապի համատեքստում: Վեպի նյութը Գյութի կյանքի պատմությունն է: Մանը տեսնում էր 20-րդ դարի Գերմանիայի պատմության եւ արվեստի բացահայտ ողբերգականությունը, եւ Գյութի կերպարով իր տարվածությունը նոր մտահղացումների պայման է դառնում: Այս մասին են վկայում հեղինակի խոստովանությունների ու առաջարկությունների տարբեր տեսական նյութերը: Վեպում ներկայացվող երկու առանձին խնդիրներ միաձովվում են մեկ նպատակի շուրջ՝ արվեստի եւ արվեստագետի գնահատման համապատկերում Գյութ անհատի եւ նրա երկերի ուսումնասիրումը: Մանը փորձում է հայրահարել արվեստագետի եւ արվեստի խնդիրները՝ պահանջելով, որ արվեստագետը հեռանա գեղագիտական հնարքներից եւ միանա հասարակության վերակառուցման պայքարին: Այս առումով վեպի տեսական աղբյուր է Մանի «Արվեստագետն ու հասարակությունը» հոդվածը: Այսպիսով՝ Մանը կարեւորում է արվեստի հեղափոխական ները, ինչով եւ պայմանավորված՝ այս գիրը ձեռք է բերում անցումային իմաստ, այն բնորոշվում է որպես ստեղծագործական մի շրջան, որի գագարնակետը եղավ «Դոկտոր Ֆալտստու» վեպը: Վեպը հասկանալու ուղեցույց է ծառայում Մանի «Գյութի կերպերը» (1938թ). Էսեն, որտեղ նա հաղորդում է հետաքրքիր մտքեր՝ վեպի բնույթի մասին: Էսենում տեղ գտած նյութերում հիմնավորվում է նաև վերթերյան թեմայի արդիականացման մասին Մանի առաջարկը: Օգտագործելով Շառլուտա Քեստների՝ Վայմար այցելելու պատմական փաստը՝ Մանը մեջբերում է Շառլուտայի գրառումներից: «Ես ծանոթացա մի ծեր մարդու հետ, որը, նույնիսկ, եթե չիմանայի, որ Գյութն է, այնուամենայնիվ ինձ վրա ոչ մի հաճելի տպավորություն չըռդեց»: [1] Այս գրառումը հեղինակը համարում է տրագիկոնիկական, մարդկային եւ իրական փաստ, ինչը թույլ է տալիս վեպ կամ պատմվածք գրելու, «որտեղ ինչ-որ չափով կարելի կլինի խոսել զգացնունքի եւ բանաստեղծության, տարիքային արժանապատվության եւ կորստի մասին եւ առիթ կտա Գյութի եւ ընդհանրապես հանձարի կերպարի ստեղծման: Երեւի կգտնվի այն բանաստեղծը, որը դա կծերնարկի»:[2] Բայց Մանը եղավ առաջինն ու միակը, ով արձագանքեց մեկ տարի անց գրեց «Լոտտան Վայմարում» վեպը:

Սյուժեի հիմքում ընկած է հետեւյալ պատմությունը: «Փիդ» հյուրանոցի առաջ կանգ է առնում փոստային կառքը, եւ այնտեղից դուրս են գալիս երեք կին: Փոխադարձ վերաբերունքից անմիջապես պարզ է դառնում, որ նրանցից երկուսը մայր ու աղջիկ են, իսկ մյուսը՝ նրանց սպասուիին: Դա վերթերյան Շառլուտան է, որն իր

* Հոդվածն ընդունվել է 19.01.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գերմաներեն և ֆրանսերեն լեզուների ամբիոնը:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

աղջկա հետ 1816 թվականին գալիս է Վայմար՝ իր քրոջը տեսության: Իսկ իրականում նրան այստեղ էր բերել Գյոթեին հանդիպելու հույսը: Անցել են տասնյակ տարիներ այն պահից, երբ Շառլուտային եւ իր փեսացուին տեղեկացրել էին ընկերոջ՝ Գյոթեի հանկարծակի մեկնումի մասին: Սակայն դա չի խանգարել Շառլուտային՝ հավատարիմ մնալ իր հիշողություններին: Հյուրի ով լինելը պարզվում է փաստաթերի լրացման ժամանակ: Առաջին հետաքրքրությունը նրա անձի հանդեպ ցուցաբերում է Մագերը՝ հյուրանոցի սպասավորը, որը 1816թ. սեպտեմբերյան այդ օրը հետագայում համարեց իր կյանքի լավագույն օրերից մեկը: Այս այցելության լուրը ցնցում է ամբողջ բաղաքը: Բոլորը ցանկանում են տեսնել մի կող, որի պատմությունը մի գիշերվա ընթացքում գրավել էր ողջ Եվրոպան: Դստերը քրոջ տուն ուղարկելուց հետո Շառլուտան լուր է ուղարկում Գյոթեին՝ իր այցելության մասին, ցանկություն հայտնում դատերը՝ նրա հետ ծանոթացնելու եւ անձամբ նրան տեսնելու: Հաջորդ իսկ առավոտից նա չի կարողանում ազատվել այցելուներից: Նրան այցելում են այդ ժամանակ նոյն հյուրանոցում իշեւանած իրանդական նկարիչ միևնույն կեղզը, ապա՝ դոկտոր Ռիմենը, Աղել Շոպենիառերը, եւ, վերջապես Ավգուստ ֆոն Գյոթեն: Վերջինս տեղեկացնում է նրան՝ իրենց մոտ Ճաշելու հոր հրավերը: Բոլոր հանդիպումների, երկխոսությունների եւ կերպարների շուրջ մտումների ենթատեքստում ընկած է Գյոթեի թեման:

Վեպն օժնված է կառուցվածքային տարբեր առանձնահատկություններով: Այն բաղկացած է ինն առանձին գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը փոքր էպիկական ձեւով ու ինքնուրույն բովանդակությամբ առանձին պատմվածք է: Սյուս կողմից դրանք ծովզում են իրար նպատակային առումնվ: Բոլոր գործողությունների, իրադրությունների ու դրվագների միջոցով զարգանում է Գյոթե բազմաբնույթ երեւույթը: Բոլոր կերպարները ժամանակին պատկանել են Գյոթեի շրջապատին: Նրանցից յուրաքանչյուրը Շառլուտայի հետ ունենում է երկար զրոյց, ինչի ընթացքում Շառլուտան զգում է Գյոթեի հանդեպ ունեցած նրանց հիացմունքն ու մտահղությունը: Նրանց պատմությունների վրա տարածվում է մի ընդհանուր անհանգույտություն, ինչից եւ կերպարները դաշնում են երկիմաստ: Այդ երկիմաստությունը լավ ժանոր է նաև Շառլուտային: Բայց նա կարողանում է վերլուծել ու առանձնացնել իրարից արժեւորման հակառիք բեւեռները: Մարդու վեհությունը Շառլուտայի գնահատումով ինքնազոհողության արդյունք է: Դրան հասնելու համար նա կարեւորում է մարդկային արժանապատվության, սիրո, ընկերության վերաբերյալ սկզբունքային դիրքորոշումը: Դստեր հետ ունեցած թերեւն վեծի մեջ նա ասում է: «Ին կյանքն էլ դժվար է եղել, եւ ես ստիպված եմ եղել շատ բաներից հրաժարվել: Կարծում եմ՝ քո սիրելի, անմոռանալի հայրիկի համար եղել եմ լավ կին, նրա համար լուս աշխարհ եմ բերել տասնմեկ երեխա, որոնցից երկուսը Աստված խլել է ինձանից, իսկ ինը մեծացրել եմ, ու դարձել են ազնիկ մարդիկ: Համբերել ու տառապել եմ: Ես զոհել եմ ինք ինձ: Սակայն մարդամոտություն ու բարեհոգություն ինձ ոչ մի բանում չեն խանգարել: Եվ դաժան կյանքն ինձ չի կոպտացրել, որ ես մեծքով շրջվեմ Մագերին ու ասեմ նրան. «Հիմար, ինձ հանգիստ թող»: Ես դրան ընդունակ չեմ»: [3]

Պատմական փաստերի միջոցով Մանը քննում է Գյոթեի կերպարը՝ երիտասարդ եւ ծեր տարիքում, իրականության եւ պոեզիայի միջեւ: Տարբեր տեսանկյուններից Գյոթեի կերպարի ուսումնասիրումը թույլ է տալիս Գյոթեին ընդունել որպես

մի «ամբողջություն»: Շառլոտայի այցելության առթիվ ընթացող սյուժետային բոլոր գործողությունների արդյունքում Մանք նպատակ ունի տեսնելու Գյոթեի պատկեր՝ որպես կոմպոզիցիա, որի զարգացման հնարավորությունները Մանք ընդարձակում է հասարակական կյանքում, բնագիտության մեջ, թատրոնում, պետական քաղաքական կյանքում եւ այլ բնագավառներում: Բոլոր դեպքերում Մանք կարենում է Գյոթեի ռեալիզմը, նա զնահատում է Գյոթեի բնագիտական հայտնագործությունները բույսերի փոխակերպման ու գույների ուսմունքի ասպարեզում, ճարտարապետության մեջ նրա հետաքրքրավիրությունը եւ այլն: Ուստի թարգմանիչ, գրականագետ Ն. Վիլմոնտի (1901-1986) կարծիքով՝ Գյոթեի մասին այս վեպը լավագույն գործն է, որտեղ Մանք ավելի շատ վերակերտում է Գյոթեի կերպարն իր անկրկնելի կենսականությամբ, քան վերլուծում եւ ընդհանրացնում: Վեպը համարում են նաեւ լեգենդ, որտեղ Գյոթեի կերպարը բարձրանում է ծերության օրերի անձնական կյանքից, բայց այն ստանում է այնպիսի չափեր, որոնք այդ կյանքի վրայով անցնում են դեպի հեռուները: Չնայած դրան՝ ոչինչ չի պատմվում, թե ինչն է այդտեղ ոչ երկրային, եւ ոչ իրական:

Գյոթեի կերպարի ստեղծումը Մանք համարել է իր ժամանակի մեծ անհրաժեշտություն: Վեպում Գյոթեն նկարագրվում է բնավորության ու գործունեության ամբողջ բարդությամբ: Այս գիրքը խոսում է մեծ ու հապատ մենակության մասին: Դա Մանի մենակության շրջանն էր՝ հայրենիքից հեռու: Սակայն նա խորապես համոզված է, որ Գերմանիան իր եւ իր նամանների հայրենիքն է: Եվ ինքը այդ երկրի արժանի որդիներից մեկն է: Սա նույնացնում է Գյոթեին ու Մանին, ինչից ենելով՝ գրող, գրականագետ Քլաուս Հարիթենստր (ծնվ. 1927թ.) Մանի կենսագրական է-ծերում վեպի հեղինակին անվանել է Յոհան Վոլֆանգ ֆոն Ման: Վեպի ուսումնասիրությամբ զբաղվել է գերմանացի փիլիսոփա Էռնստ Կասիրերը (1874-1945): Նա նշել է, որ Մանից բացի ոչ մի մեծ արվեստագետ չի հանդանել կերտելու Գյոթեի գեղարվեստական կերպարը: Դա ենթադրաբար նա կապում է թեմայի բարդության հետ: Ըստ L. Ֆերթիգի՝ վեպը գրվել է հայր եւ որդի հարաբերության մոտիվով, ինչի համար եւ Մանն ուսումնասիրել է գերմանացի գրականագետ Լյուդվիգ Գայգերի (1848-1919) «Գյոթեն եւ իր ընտանիքը» (1908թ.) եւ գրող Վիհելմ Բոդի (1862-1922) «Գյոթեի որդին» 1918թ. գրքերը:[4] Իր վեպում Մանը նպատակ ունի ցույց տալու, թե ինչ չափով կարող է Մեծ մարդու որդին ճնշվել հոր ազդեցիկությունից: Այդ խնդիրը Մանը վերլուծում է Աղել Շոպենիառերի կերպարի միջոցով: Նա գրում է: «Մեծ մարդու որդիի լինելը մեծագույն երջանկություն ու արժեքավոր հարմարություն է, բայց եւ մի ճնշող ծանրություն եւ սեփական ինքնության մշտական նվաստացում: [5] Այս խնդիրն ունեին նաեւ Մանի երեխաները, որոնց դաստիհարակության համար Մանը կնոջ հետ անում էր ամեն ինչ՝ դրա մեջ ներդնելով մեծահասակներին բնորոշ լրջություն ու խոհեմություն: Տարիներ ամց Մանի երեխաներն իրենց մանկությանը ցավով են անդրադարձել: Այսպես՝ Քլաուս Մանը իր «Հոր կերպար» հոդվածում գրել է: «Նա գտնում էր, որ ավելի լավ կլիներ մի քիչ որեւէ մեկի օրինակով ապրել, քան փորձել մեզ վրա անմիջական ու մանկավարժորեն ազդել»[6]: Գոլո Մանը նշել է, որ այդ մթնոլորտում անհնար էր պրակտիկ մասնագիտություն ձեռք բերել: [7] Ք. Մանի «Հրաբուխներ» վեպի լույս տեսնելուց հետո Մանը, ի պատասխան որդու դժգոհություններին՝ ծնողների դեմ ուղղված, այսպես է գրել. «Այո, նրանք թեզ երկար ժամանակ կատարյալ չեն ընդունել, քո մեջ չեն տեսել որդյակի

կամ թեթեւամիտ մեկի, ես ոչինչ չեմ կարող փոխել: Բայց նաեւ անվիճելի է, որ դու կարողանում ես ավելին, քան շատերը: Դրա համար քեզ ընթերցելը համարում եմ իմ հատուցումը»: [8]

Գյորեի կերպարը, ըստ Մանի, շատ գծերով ինքնավերլուծություն է: Մանը Գյորեի մտքերի մեջ ներգրավում է ամբողջական մասեր՝ սեփական հրապարակախոսական հոդվածներից, նաև մասին ռուս թարգմանիչ, բանասեր, Մանի, Հեսսեի, Կաֆկայի գրքերի թարգմանիչ Սոլյոնն Ապստը(1921-2010) գրում է. «Վեպում Մանը պարադոքսալ ամբողջությամբ ցույց է տվել այն քնարական հոսանքը, որը, սկիզբ առնելով «Բուլենբրոնկներ»-ից (1901), որտեղ հեղինակը տալիս է իր պատմությունը, սեել է իր ստեղծագործական օվկիանոսը՝ ողջ կյանքի ընթացքում»:[9] Անմիջական կերպարների ոչ այնքան մեծ քանակը էապես խոսում է կերպարների բազմազանության ու ընդհանության մասին: Պատմականորեն վավերացված են Շառլուտա Քեստոների ժամանումը Կայսար՝ «Երիտասարդ Վերերի տառապանքները» վեպի լույս տեսնելուց 44 տարի անց, ինչի մասին Գյորեն կարծու չոր ակնարկել է իր օրագրում՝ նույն տարվա սեպտեմբերի 25-ին, եւ 1816թ. հոկտեմբերի 9-ին Շառլուտա Քեստոներին ուղարկած հետեւյալ տեղեկությունը՝ «Սեծարգո՞ ընկերուիհի, կիաձեի՞ք Դուք այսօր երեկոյան բարեհաճել իմ օթյակ, իմ կառքը կզա Զեր ետեւից: Տոնսի խնդիր չկա: Իմ սպասավոր Զեզ ցույց կտա ձանապարհ պարտերի միջով: Կներեք, որ ես անձանք չեմ ներկայանում, նաեւ այն բանի համար, որ մինչեւ իմաս անձանք Զեզ չեմ տեսակցել, թեեւ ես շատ հաճախ մտքերով եղել եմ Զեզ մոտ: Լավագոյն ցանկություններով՝ Գյորե: [10] Գյորեի ձեռքով գրված այս երկտողը առ այսօր պահպանվում է Լայացիկի համալսարանի գրադարանում:

Շառլուտայի մենախոսության, նրա եւ դստեր ձակատագրերի համեմատության մեջ հիմք ընդունելով հոգեկան խռովքի հոգեբանական քննումը՝ Եվրոպական քննադատությունը Մանին դիտել է որպես ռոմանտիկ-ռեալիստի: Վեպի կերպարների համակարգում հեղինակն իր ծայնը զիջում է գործող կերպարների ճարտասանությանը: Վերջինս, ըստ Մանի, դարաշրջանի գրականությանը բնորոշ հատկանիշ է: Այն բաղաքական իմաստ է ստանում Մագերի խոսքերում.«Թող ների ինձ տիկին խորհրդականը իմ հուզմունքի եւ այսքան նեղմիտ շատախոսության համար: Երբ սիրոտ լիքն է, բարը չես կարող ես պահել: Այսպես է ասում ժողովուրդը՝ իր ոչ գրական, դիպուկ լեզվով»: [11] Գյորեի կերպարի ազդեցությունը ակտիվական է միայն յոթերորդ գիշում, նրա մենախոսության մեջ, որտեղ Մանը Գյորեի շուրջերով արտահայտում է իր բաղաքական հայացքները, գերմանական ազգի մասին իր հակաֆաշիստական խոհերը: Ըստ Մանի՝ Գերմանիան ազատությունն է, լուսավորությունն է ու սերը:

Վեպում գիշավոր կերպարի՝ Գյորեի միջոցով Մանն արտահայտում է նացիոնալ-սոցիալիզմի հանդեպ իր տեսակետները: Կերպարների գրուցներում Նապոլեոնի դեմ գերմանական պետության պատերազմի քննարկումը վեպը դարձնում է նաեւ բաղաքական: Մի ամբողջ գլուխ Աղեքը խոսում է այդ մասին: Գյորեի եւ Նապոլեոնի ընկերությունը նա այսպես է գնահատում.«Այդ հավատարմությունն ու ընկերությունը կարելի է անվանել եսասիրական, բայց նախ պետք է նշել, որ այդպիսի մարդու էգոիզմը անձնական լինել չի կարող: Այն ընդհանուր բնույթ ունի, եւ երկրորդ՝ արդյո՞ք Գյորեն մենակ է իր հայացքների ու համոզմունքների մեջ»: [12]

Կերպարների հոգեբանական վերլուծության շնորհիվ վեպը նույնքան հոգեբանական է, ինչքան փիլիսոփայական կամ քաղաքական: Լուստափ այցելության մոտիվով Մանն ստեղծում է Գյոթեի եւ մնացած կերպարների հոգեբանական համադրությունը: Ի տարբերություն Վայմարի բնակիչների՝ Գյոթե մարդու դժողովն է այդ այցելությունից: Մանը բացում է կերպարների հոգու դիալեկտիկան: Նրան գոհացնում է այն միտքը, որ Ոհմենը հրաժարվում է Ուստողի համապարանում իրեն տրամադրված թափուր պաշտոնից, որ Ազգուստը մտահոգված է Վայմարյան թատրոնը նեկավարելու իր հրապուրանքով: Այսեղ Մանը Գյոթեի միջոցով կարեւորում է ուժի հանդեպ մարդու ինքնազնահատման ու ինքնավաստահության աստիճանը: Գյոթեի մտերիմների ձակաստագրերի օրինակով Մանը հարց է բարձրացնում, թե արդյո՞ք կարելի է նպատակին հասնելու համար վերջ տալ կյանքին կամ զգացմունքին: Այս մարդկի ձգվում են դեպի Գյոթեն՝ հրաժարվելով սեփական դեմքից: Լուստան միակ կերպարն է, որ կարողանում է հաստատել մարդկային արժանապատվությունը՝ հակառակ վայմարցիներին, որոնք կազմում են Գյոթեի շքախումքը: Վայմարցիների օրինակով Մանը խոսում է այն գերմանացիների պատախանաւությունից, որոնք հրաժարվել են ճիշտ դիրք բռնելու մտքից եւ թույլ տվել իրենց օգտագործելու: Այս միտքը մի քանի տեղ կրկնելով՝ Մանն արդիականացնում է հեղափոխական ռեալիզմի ոգին, նա ցավում է Գերմանիայի ձակաստագրի համար: Վեպում ողբերգական զարգացում ունի Գյոթեի որդի Ազգուստի եւ Օթիլիայի սիրո պատությունը: Օթիլիան մեծարում է Գյոթեին եւ սիրում Ազգուստին՝ որպես Գյոթեի որդու, իսկ Ազգուստը Օթիլիայի մեջ տեսնում է մի աղջկա՝ հոր կողմից ընտրված իր համար: Նրանց հարաբերությունը լարվել էր դեռ մինչեւ նշանադրությունը, երբ հայրենասեր պրուտուի Օթիլիայով տարված ուսանող Հյանկեն մեկնում է ձակաս՝ ֆրանսիացիների դեմ կրվելու, իսկ Ազգուստը՝ հոր միջնորդությամբ մնում է տանը: Գյոթեի՝ որպես ամենակարող հոր այս ցանկությամբ իհմք է դրվում սեփական որդու ողբերգությանը: Ազգուստի մասին Շիլերի այրին ասում է: «Իսկ մեր խեղճ ընկերը մի՞թե դեռ մելանխոլիկ չի դարձել: Թեեւ, ճիշտ է, նա այդպիսին էլ եղել է»: [13] Այսպիսով՝ նա ծեռք է բերում վախսկոտի համբավ եւ արժանանում շրջապատի արհամարհանքին: Այնուամենայնիվ այս հանգամանքը չի խանգարում նրանց միությանը, որով եւ Մանը արդիականացրել է Գյոթեի սիրո խնդիրը: Վերջինս հասկանում է նաեւ Ազգուստը, երբ, ճաշկերութիւնը ընթացքում դիտելով Շառլուտային, պատկերացնում է նրան երիտասարդ տարիքում եւ նկատում, որ նրա եւ երիտասարդ Օթիլիայի միջեւ բավական մեծ նմանություն կա: Այս գույքի միության մեջ Գյոթեն գիտակցում է իր ունեցած իր դերը: Ըստ նրա՝ բնությունը երես է բերել Ազգուստից, եւ ինքն ուզում է մի անգամ էլ այն նրա մեջ կենդանացնել՝ նրան ամուսնացնելով այդ ամազոնուին հետ, որն աղջկա այն տեսակն է, որից ինքն անխուսափելի իրեն փախել էր: Հոգեբանական համատեքստում Մանը փորձում է լուծել նաեւ Լուստայի սիրո խնդիրը՝ սիրե՞լ է արդյոք Լուստան Վերթերին: Այդ մասին Մանը գրել է. «Լուստան զգում էր, որ իր համար սարսափելի ծանր կլիներ կորցնել Վերթերին: Նա կցանկանար, որ Վերթերն իրեն եղբայր համարեր կամ էլ ինքը կարողանար նրան ամուսնացնել իր ընկերուիիներից մեկի հետ: Դրանով նա կարողանար բարի Ալբերտի հետ Վերթերի հարաբերությունը նաքուր իինքի վրա վերստեղծել: Բայց երբ նա հերթով աչքի է անցկացնում իր ընկերուիիներին, նրանց մոտ միշտ ինչ- որ բանի թերացում է գտնում: Նա նրանց մեջ չի

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

տեսնում մեկին, որին կպարգեւեր իր ընկերոջը: Երիտասարդ բանաստեղծն ավելացնում է. «Այս դիտումներում Լուստան հոգու խորքում, առանց ինքնի իրեն խստովանելու զգացել է, որ ինքը թաքրու ցանկանում է Վերթերին իր համար պահել»:[14] *Լուստայի՝ Կայմար այցելելու պատրվակը Մանք համարում է նրա սիրո ապացույցը: Հոգեբանական նույն մոտեցմամբ է Մանք գնահատում նաեւ Գյոթեի «Ընտրովի ազգակցություններ» վեպը: Նա նշում է.«Վերթերյան պահերը հիշեցնում են վեպի հոգեբանական արվեստի մասին»:[15]*

Թեեւ Գյոթեն վեպում ներկայանում է միայն յոթերորդ եւ ութերորդ գլուխներում, բայց նրա կերպարի մուտքն սկսվում է առաջին իսկ սորոերից, եւ հետագա զարգացումը Մանն իրագործում է սյուժեի մեջ ներգրաված բոլոր կերպարների օգնությամբ: Այսպես՝ Մագերի հայացքում Գյոթեն ստվորական մի մարդ է, Ավգուստը՝ Գյոթեի որդին, ցույց է տալիս հոր՝ որպես եւ պետական պաշտոնյայի, եւ անհատի կյանքը, Աղել Շոպենհաուերը գնահատում է նրան վայմարյան կազմակերպության քննադատական տեսակետից, Ռիմենի համար Գյոթեն մնում է որպես մեծ բանաստեղծ: Յուրաքանչյուր կերպարի պատմություն գերմանական իրականության մասին առանձին նովել է ու նաեւ՝ Գյոթեին գնահատման տեսակետ, արվեստագետի եւ իրականության վերաբերյալ մի պատկերացում: Լուստան իր կարծիքները պնդում է Գյոթեի մասին ունեցած աղջկական ռոմանտիկ հիշողությունների հիմնան վրա: Չնայած զրուցակիցների տարակարծությանը՝ նրանք միաբերան ընդունում են, որ Գյոթեի մեջ ապրում է այն գերագույն ուժը, որի առաջ իրենք պարտավոր են խոնարիկել:

Գյոթեի կերպարի բարդության շուրջ Աղելի հարադրական վերլուծումների միջոցով Մանք միաժամանակ արդարացնող պատասխաններ է փորձում գտնել Գյոթեի անձի վերաբերյալ ճենավորված վիճելի խնդիրների համար: Գյոթեի բնակուրության «ստիրնական» գիծն այսպես է բացատրում. «Կաղուց ինձ մոտ այն տպավորությունն էր ստեղծվել, որ հասարակությունը, համենայն դեպք մեր՝ գերմանական, ծառայամտության ծգտումով ինքն է փչացնում իր տերերին, իր սիրելիներին՝ թույլ տալով նրանց չարաշահելու գերադասությունը իրենցից, ինչը ոչ մեկին չի գոհացնում: Այսպես, օրինակ, մի անգամ Գյոթեն, չափից դուրս ծավալելով իր կատակը, տանջել է մարդկանց եւ նրանց հասցել միանգամայն անզորության: Նա ստիպել էր հյուրերին առանձին ռեկվիզիտներով կռահել դեռեւս բոլորին անձանոթ, նոր պիտի բովանդակությունը: Մարդիկ սկսել էին ձգվել, ավելի ու ավելի շատ հորանջել, բայց նա չէր զիջում եւ շարունակում էր նրանց իր համառությամբ ձանձրացնել: Ես ակամա ինձ հարցի. մի՞թե նա չի զգում իր բռնությունը, որին ենթարկում է մարդկանց: Ոչ, նա դա չէր զգում, հասարակությունը նրան ետ էր ստվորեցրել դրանից: Իսկ ես, իրոք, չէի հասկանում՝ ինչպես նրան չի ձանձրացնում այդ դաժան խաղը: Կարծում եմ՝ բռնությունը տաղտկալի զբաղմունք է»:[16] Այսպիսի վտանգավոր խաղի արտահայտման օրինակ է Աղելը բերում երիտասարդ Ավգուստի եւ Օթիլիա Պոզվիշի կապը, ինչը նա համարում է ողբերգություն, եւ ինչի համար նա մեղադրում է Գյոթեին: Լուստայի հետ զրուցելիս նա այսպես է ասում. «Բայց ես չեմ կարող նրան ներել եւ երբեք չեմ ների այն բանի համար, ինչ նա արել էր այն ժամանակ իր որդու հետ...»:[17] Արանով հանդերձ Աղելը Գյոթեի ծնունդը համարում է մարդկության աստեղային ժամերից մեկը: Մոտիկ լինելով Գյոթեին՝ Ռիմենը ձանաչել է գերագույն ուրախությունը, նրա հոգու նրբությունը, բայց եւ նրա

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2017

սարսնությունն ու անտարբերությունը շրջապատի նկատմամբ:

Գյորեի կերպարի զարգացման նախադրյալներից մեկը նրա հանդիպումն է Լուտուայի հետ: Եղնելով նրանց բաժանող ժամանակային, սոցիալական վիճակից՝ Մանն անընդհատ ձգձգում է նրանց հանդիպումը: Իր ներքին խռովքի ու հուզմունքի մեջ Գյորեն դժգոհում է, որ անցյալը դավադրություն է գործում իր դեմ՝ կյանքն անկարգ ու հիմար դարձնելու համար: [18] Ավելորդ ասելուներից խուսափելու համար ընդունելությունը կազմակերպում է հարազատների միջավայրում: Երկրորդ հանդիպումը տեղի է ունենում կարօտում, ներկայացումից հետո: Լուտուն անսպասելի զգում է, որ ինքը կարօտում մենակ չէ: Նրա կողքին նստած էր Գյորեն: Պատմական տվյալներով նրանք չեն հանդիպել: Մանը հորինել է նրանց հանդիպումը վեպում, որտեղ եւ վերականգնում է նրանց մտերմությունը: Բայց սա չի համարվում անցյալի վերադարձ, այն տեղի է ունենում միանգամայն այլ մակարդակի վրա: Մրանով Մանը կրկին վստահում է արվեստի ուժին եւ, ի դեմս Գյորեի, արվեստագետի հետ կապում մարդկային հասարակության զարգացման ու դաստիարակման հավերժական խնդիրը: Լուտուան, որ արդեն տասնմեկ երեխաների մայր է, խոսում է բարձր գաղափարներից: Նա խոստովանում է Գյորեին, թե ինչքան է իրեն վաստ զացել՝ տեսնելով իր իհն ու սիրելի ընկերոջը շրջապատող գոհողությունները: Այնուհետեւ Լուտուայի աչքի առջեւ պատկերվում է Գյորեի կյանքի ոչ միայն վեհությունը, այլ նաև ողբերգականությունը: Գյորեն պատասխանում է. «Դու խոսում ես զոհի մասին, եւ, այստեղից սկիզբ է առնում խորհրդայինը: Դա աշխարհի, կյանքի, անհատի եւ արարման հզոր ամբողջականության գաղտնիքն է: Աստվածներին են զոհեր մատուցել, բայց ի վերջո Աստված ինքն է զոհ գնացել»: [19]

Այսպիսով՝ մշակութային ժառանգության պահպանման գործում Մանը կարեւորում է հանձարներին անդրադառնալու եւ նրանց մասին ստեղծագործելու բոլոր փորձերը: Այս առումով բարձր է զնահատվել Մանի «Վարպետների տարապանքներն ու մեժությունը» գիրքը /«Leiden und' Grosse der Meister»/: Այն լույս է տեսել 1935թ. Բեռլինում: Գիրքն ընդգրկում է Գյորեի, Ռիչարդ Վագների, Սերվանտեսի, Պլատոնի եւ այլ հանձարների մասին հոդվածներ: «Հակաֆաշիստական տեսանկյունից այս կերպարների վերլուծությունը եւ Գերմանիայի մշակույթի պատմության մեջ նրանց ունեցած դերի քննարկումը ժամանակի համար ունեցան արդիական հնչեղություն: Մանի այս երկին անդրադարձել են գրականագետներ Յուլգեն Պեթրոսենը («Faustus lesen»), Կուրտ Զոնթայմերը («T. Mann und die Deutschen»): Հունգարացի փիլիսոփա, գրականագետ Գեորգ Լուկաչը (1885-1971) մշակութային մեծ ժառանգություն է համարում Մանի այս գործը: Այդ մասին նա գրում է. «Այդ կերպարների վերլուծությունը, նրանց իրական բնակորդության բացահայտումը, հակաֆաշիստների տեսանկյունից նրանց նշանակությունը գերմանական մշակույթի զարգացման մեջ, մեր օրերում կարող է ունենալ այն արժեքը, որը դուրս կգա գրականության սահմաններից»:[20]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Mann T., Es geht um den Menschen, Verlag Progress, Moskau, 1976, s.263:
2. Նույն տեղում, էջ 264:
3. Манн Т., Лотта в Веймаре: Роман /Пер, с нем. Ман Н., Л.: Художественная литература,

1990, стр. 16.

4. Fertig L., Vor-Leben, Bekenntnis und Erziehung bei Thomas Mann, S. 108.
5. Նոյն տեղում:
6. Նոյն տեղում,էջ 100:
7. Նոյն տեղում,էջ 101:
8. Նոյն տեղում,էջ 109:
9. Mann T., Es geht um den Menschen, S. 6.
10. Манн Т., Лотта в Веймаре, стр. 278.
11. Նոյն տեղում, էջ 107-108:
12. Նոյն տեղում, էջ 127:
13. Mann T., Es geht um den Menschen, 1976, с.261.
14. Նոյն տեղում:
15. Манн Т., Лотта в Веймаре, стр. 89.
16. Նոյն տեղում, էջ 123:
17. Նոյն տեղում, էջ 235:
18. Նոյն տեղում, էջ 286:
19. Նոյն տեղում:
20. Лукач Г., Томас Манн о литературном наследстве. Литературный критик. 1935, стр. 36.

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Գյորեի կերպարը Թոնաս Մանի «Լոտտան Վայմարում» վեպում
Սիրվարդ Ստեփանյան

Սույն հոդվածում վերլուծվում է Յ.Վ. Գյորեի կերպարը՝ 20-րդ դարի լավագույն երկերից մեկում՝ Թ. Մանի «Լոտտան Վայմարում» վեպում։ Մանն անդրադառնում է Գյորեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի կերպարներին։ Լոտտայի մտորումների միջոցով Մանը Գյորեի հանձնարին արժեւորում է տարբեր տեսանկյուններից՝ ցույց տալով նրա բնավորության եւ ստեղծագործության ամբողջ բարդությունը։ Իր ժամանակների համար Մանը կարեւորում է Գյորեի կերպարի՝ որպես գերմանական մշակույթը մարմնավորող հերոսի ստեղծումը։

РЕЗЮМЕ Образ Гете в романе “Лотта в Веймаре” Томаса Манна Сирварт Степанян

Ключевые слова: Томас Манн, роман, Лотта, немецкий, Гете, любовь, искусство, литература, образ, человеческий, характер.

Статья посвящена анализу образа И.В.Гете в одном из лучших романов XX века "Лотта в Веймаре" Томаса Манна. В романе автор возвращается в мир "Страданий юного Вертера" Й. В. Гете. Исходя из размышлений Лотта, Манн оценивает гения Гете с разных точек зрения, демонстрируя всю сложность его характера и творчества. Сочинение образа Гете, воплощающего в себе героя немецкой культуры, по мнению Манна, необходимо для своего времени.

SUMMARY

Goethe's Figure in *Lotte In Weimar* by Thomas Mann
Sirvard Stepanyan

Keywords: Thomas Mann, novel, Lotte, German, Goethe, love, art, literature, figure, human, character.

The article is devoted to the analysis of one of the best novels of XXth century *Lotte in Weimar* by Thomas Mann, where the author draws on the world of Goethe's novel "The Sorrows of young Werther". Lotte's thoughts allow Mann to assess Goethe's genius from many points of view, demonstrating all the complexity and creativity of his art and character. According to Mann the creation of Goethe's figure is necessary for his time as the best embodiment of the German cultural hero.